ԿԳՄՄՆ Գյումրու թիվ 1 ավագ դպրոց

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Հղումները գիտական հրապարակումներում

Կատարող՝ Չավուշյան Արթուր Աշոտի

/ ազգանուն, անուն հայրանուն/

<Գյումրու ՇՊՀ ավագ դպրոց > , Պատմություն

/ դպրոց մասնագիտություն , ըստ վերապատրաստման խմբի /

Ղեկավար՝ Լաուրա Գրքիկյան Մեդրակի

/անուն ազգանուն հայրանուն

Գյումրի 2022

Բովանդակություն

Ներածություն……..……..….3

Գլուխ 1. Հղումները գիտական հրապարակումներում

1.1. Ինչո՞ւ հղում կատարել: Հղումների էությունը և նշանակությունը……..……4

1.2. Հղումներին ներկայացվող հիմնական պահանջները……..…….5

1.3. Հղումների կատարման անհաժեշտությունը……...6

1.4. Աղբյուրների ճիշտ ընտրություն…….……..…..9

1.5. Աղբյուրների տիպաբանությունը……...……..11

1.6. Հղումներ կատարելու ձևերը…….….12

1.7. Հղումների հիմնական ոճերը…….12

Գլուխ 2. Օգտագործված աղբյուրների մատենագիտական տվյալների ներկայացումը.14

2.2. Օգտագործված աղբյուրների ցանկ և գրականության ցանկ…….16

Եզրակացություն…….……18

Օգտագործված գրականության ցանկ……....19

Թեմայի հիմնական նպատակներն են՝

- Ներկայացնել հղումների ճիշտ կատարման ընդհանուր բնութագիրը.
- Մեկնաբանել հղումներին ներկայացվող հիմնական պահանջները, կատարման անհաժեշտությունը.
- Բացատրել հղման աղբյուրների ճիշտ ընտրության, հղումներ կատարելու ձևերի, հիմնական ոճերի առանձնահատկությունները.
- Կարևորել օգտագործված աղբյուրների ցանկի ճշգրտությունը, մատենագիտական տվյալների ճիշտ ներկայացումը:

Թեմային առնչվող խնդիրներն են՝

- Բացահայտել հղման աղբյուրների ճշգրտությունը պահպանելու կարևորությունը.
- Պարզաբանել հղումներ և մեջբերումներ կատարելու եղանակներ, միջոցներ ու մեթոդներ.
- Նպաստել հղումները հետազոտական աշխատանքում ճիշտ կիրառելու կարողությունների, հմտությունների զարգացմանը, հղման գրականության ցանկից ճիշտ օգտվելու կանոնների կիրառմանը:

Թեմայի արդիկանությունը՝

- Հարափոփոխ ժամանակաշրջանում անհաժեշտ է ճիշտ կարգավորել հետազոտական աշխատանքի գրականության ցանկը, հղումները և մեջբերումները՝ խուսափելու համար գրագողության և աշխատանքը անվավեր ճանաչելու վտանգներից:

Ներածություն

Հղումները գիտական աշխատանքների անբաժան մասն են և աշխատանքի գիտականության կարևոր (թեև երբեմն ոչ որոշիչ) ցուցիչներից մեկը: Որպես կանոն, մենք հղում կատարում ենք ամեն անգամ, երբ աշխատանքում ներկայացնում ենք որևէ աղբյուրից վերցված տեղեկությունը, ինչ-որ մեկի հայացքները կամ էլ երբ կապ ենք ստեղծում մեր գրածի և դրան վերաբերող աղյուսակի, գծապատկերի միջև: Այդուամենայնիվ, հատկապես սկսնակ հետազոտողների մոտ երբեմն առաջ են գալիս մի շարք հարցեր, ինչպես օրինակ՝ ե՞րբ է անհրաժեշտ հղում կատարել, ի՞նչ աղբյուրներ կարելի է օգտագործել և, հետևաբար, դրանց հղում կատարել, հղում կատարելու ո՞ր ձևն է նախընտրելի, աղբյուրների մատենագիտական ո՞ր տվյալներն ու դրանք ինչպե՞ս է պետք ներկայացնել հղման մեջ և այլն, ավելի կոնկրետ՝ ինչո՞ւ, ինչի՞ն, ե՞րբ և ինչպե՞ս հղում կատարել: Այս հարցերին կանդրադառնանք ստորև:

ԳԼՈՒԽ 1 ՀՂՈՒՄՆԵՐԸ ԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ

1.1.Ինչո՞ւ հղում կատարել: Հղումների էությունը և նշանակությունը

Սահմանում: Հղումն օգտագործվող տեղեկության, տվյալի (փաստական, վիճակագրական տվյալներ, այլ հեղինակի միտք և այլն) աղբյուրի հիշատակումն է (մատենագիտական կամ արտաքին հղում) կամ աշխատանքի տարբեր մասերը (գլուխ, ենթագլուխ, նկար, աղյուսակ, հավելված և այլն) միմյանց կապող գրառումը (ներքին հղում):

Գոյություն ունի արտաքին կամ մատենագիտական հղումներ: Արտաքին հղումը պահանջում է օգտագործվող աղբյուրի մատենագիտական տվյալների ճշգրիտ ներկայացում: Աշխատանքում օգտագործվող տվյալի, տեղեկության աղբյուրը չհիշատակելը համարվում է գրագողություն կամ հեղինակային իրավունքների խախտում, իսկ աղբյուրի մատենագիտական տվյալները թերի ներկայացնելը՝ կոպիտ սխալ: Այստեղից էլ բխում է հղում կատարելու **«ոսկե կանոնը»**՝ հետաքրքրված ընթերցողին տալ բավարար տեղեկություն (մատենագիտական տվյալներ), որպեսզի նա կարողանա հեշտությամբ և արագորեն գտնել օգտագործված աղբյուրը:

Իսկ ո՞րն է արտաքին հղումների իմաստը, նշանակությունը:

1.Օգտագործված աղբյուրին հղում կատարելն ակադեմիական գրագիտության հիմնարար պահանջ է, հակառակ դեպքում գործ կունենանք գրագողության հետ:

2.Հղումն ապահովում է օգտագործված տվյալների ստուգելիությունը, այսինքն՝ հղման մեջ տրված աղբյուրի միջոցով դյուրությամբ կարելի է ստուգել մեջբերվածի հավաստիությունը: Դա նաև ենթադրում է աղբյուրի մատենագիտական տվյալների լիարժեք ներկայացում՝ օգտագործված տվյալների սկզբնաղբյուրը հեշտությամբ գտնելու նպատակով:

3.Հղումն օգտագործված աղբյուրների հեղինակների կատարած աշխատանքի հանդեպ հարգանքի նշան է: Ըստ որում, վերջինի համար անհրաժեշտ է և՛ վերլուծության տեքստում հիշատակել օգտագործված աղբյուրի հեղինակին, և՛ համապատասխան ձևով հղում կատարել օգտագործված աղբյուրին:

4.Հղումը վկայում է, որ ներկայացված վերլուծությունը հիմնավորված է այլ հեղինակների կողմից նախկինում կատարված ուսումնասիրություններով: Դա խոսում է

այն մասին, որ ձեր աշխատանքը գիտության տվյալ ճյուղի շրջանակներում կատարված ուսումնասիրությունների մի մասն է և, միաժամանակ, ներդրում այդ ճյուղի զարգացման գործում: Հարկ է, սակայն, հիշել նաև, որ հղումներն ընդամենը պետք է նպաստեն սեփական կարծիքի, գաղափարի հիմնավորմանը, այլ ոչ թե փոխարինեն ձեր կարծիքին:

5.Հղումները վկայում են ուսումնասիրության ընդգրկունության և մատենագիտական բազայի բնույթի մասին: Սա խոսում է այն մասին, որ դուք քաջածանոթ եք ձեր աշխատանքում օգտագործված աղբյուրներին և պատրաստ եք այդ թեմայով ծավալել գիտական բանավեճ:

6.Ի վերջո, հղում անելը վկայում է, որ ուսանողը տիրապետում է ակադեմիական գրագիտության այդ տեխնիկային:

1.2. Հղումներին ներկայացվող հիմնական պահանջները

Ուսումնա(գիտա)կան աշխատանքներում օգտագործվող աղբյուրներին ներկայացվող հիմնական պահանջները չորսն են՝ հղումների քանակական և որակական բնութագրերը, ինչպես նաև հղումների (աղբյուրների) ստուգելիությունն ու վստահելիությունը:

- Աշխատանքում մատենագիտական հղումների քանակը, որպես կանոն, խոսում է քննվող հարցի տեսական մշակվածության մասշտաբների մասին: Սակայն սեփական աշխատանքը զանազան աղբյուրներին հղումներով ու մեջբերումներով հարստացնելուն զուգահեռ, անհրաժեշտ է հիշել, որ քննարկվող հարցին դուք պարտավոր եք տալ նաև սեփական գնահատականը:
- Հարկ է հիշել նաև աղբյուրների որակի մասին և հղում կատարել միայն համեմատաբար նոր հրապարակված, հեղինակավոր ու թեմատիկ աղբյուրներին՝ հնարավորինս խուսափելով դասագրքերի և տեղեկատվական նյութերի, հանրամատչելի աղբյուրների օգտագործումից: Պետք է նաև հիշել, որ աշխատանքի որակի մասին է խոսում նաև դրանում տվյալ թեմայով հիմնարար կամ դասական համարվող աղբյուրների օգտագործումը՝ հատկապես քննարկվող հիմնախնդրի տեսական մշակվածությունը և, միաժամանակ, ուսանողի՝ դրանց հետ ծանոթ լինելը ցույց տալու համար:

- Ինչպես վերևում արդեն նշվեց, «ոսկե կանոնը» պահանջում է, որպեսզի հղումն օգտագործված աղբյուրին պարունակի բավարար չափով (թվով, մանրամասնությամբ) մատենագիտական տվյալներ, որոնք ընթերցողին հնարավորություն կտան՝ հեշտությամբ և արագ գտնելու օգտագործված աղբյուրն ու ծանոթանալու այն հատվածին, որին դուք հղում եք կատարում ձեր աշխատանքում: Սա ապահովում է ձեր օգտագործած տվյալների ստուգելիությունը:
- Օգտագործվող աղբյուրները պետք է լինեն նաև վստահելի (հուսալի), այսինքն՝ գիտության տվյալ բնագավառում ընդունված և ճանաչված: Վստահելի և ոչ հուսալի աղբյուրները զանազանելը բավական դժվար է, հատկապես՝ սկսնակ հետազոտողների համար: Վստահելիության կարևոր, բայց ոչ որոշիչ ցուցիչներ կարող են լինել աղբյուրի վերնագիրը, հեղինակի և հրատարակչության մասին տեղեկությունները, շարադրանքի ոճը և ձևավորումը (հիմնականում՝ գրքերի դեպքում), ինչպես նաև հրապարակող ամսագրի հեղինակավորությունը (Impact factor), հեղինակին ու նրա հոդված(ներ)ին հղում անելու գործակիցը: Ամեն դեպքում, գոնե սկզբնական շրջանում աղբյուրների ընտրության հարցում ուսանողը պետք է խորհրդակցի իր դասախոսի կամ գիտական ղեկավարի հետ:

1.3. Հղումների կատարման անհաժեշտությունը

Աղբյուրին հղում անհրաժեշտ է կատարել ամեն անգամ, երբ դուք օգտագործում եք մտքեր, գաղափարներ ու այլ տվյալներ հետևյալ աղբյուրներից.

- Գրքերից, գրքույկներից և հոդվածներից,
- Թերթերից և ամսագրերից,
- Տեսաֆիլմերից, հեռուստա- և ռադիոհաղորդումներից,
- Համացանցային կայքերից և էլեկտրոնային պաշարներից,
- (Էլեկտրոնային) նամակներից, օնլայն քննարկումների ֆորումներից,
- Հարցազրույցներից,
- Դասախոսություններից (եթե ձեր դասախոսը կամ գիտական ղեկավարը դա անհրաժեշտ է համարում):

Բնականաբար, անիմաստ է հղում կատարել այն ամենին, ինչն այլ մարդիկ չեն կարող կարդալ, տեսնել կամ լսել՝ ձեր մեջբերած տվյալներն ստուգելու համար: Այդպիսի դեպքերում որոշ մասնագետներ խորհուրդ են տալիս վերլուծության տեքստում պարզապես հիշատակել այլ անձանց հետ ունեցած հեռախոսազրույցի կամ նամակագրության մասին՝ միաժամանակ նկատելով, որ այսօր գոյություն ունեն այդպիսի անհատական հաղորդակցություններն արձանագրելու տեխնիկական միջոցներ: Այդուհանդերձ, մենք խորհուրդ ենք տալիս վերլուծության մեջ օգտագործել և հիշատակել միմիայն այն աղբյուրները, որոնք ստուգելի են: Իսկ անհատական հաղորդակցությունները (օրինակ՝ նամակագրությունը, հարցազրույցները) կարելի է օգտագործել՝ աշխատանքի առանձին մասում (որպես կանոն, «Հավելվածում») տալով դրանց սղագրությունը և/կամ համառոտագրությունը՝ նշելով դրանց բավարար մատենագիտական տվյալներ՝ առավելագույն ստուգելիություն ապահովելու համար:

Կան նաև հատուկ դեպքեր, երբ որևէ աղբյուրին հղում անել չի պահանջվում:

Դրանք են.

- Երբ գրում եք ձեր դիտարկման կամ փորձարկման արդյունքների մասին (օրինակ՝ դաշտային հետազոտության զեկույց):
- Երբ գրում եք ձեր փորձի և տպավորությունների մասին:
- Երբ ներկայացնում եք ձեր սեփական մտքերը, մեկնաբանություններն ու եզրակացությունները:
- Երբ օգտագործում եք «հանրահայտ տեղեկություններ» (փաստեր, որոնք կարելի է գտնել բազմաթիվ տեղերում և հայտնի են բազմաթիվ մարդկանց) կամ ժողովրդական բանահյուսություն:
- Երբ օգտագործում եք տվյալ մասնագիտության մեջ համընդհանուր ճանաչում գտած փաստեր կամ տեղեկություններ (անհրաժեշտ է խորհրդակցել գիտական ղեկավարի հետ):

Իսկ որո՞նք են վերը նշված ցուցակի վերջին երկու դեպքերը, որոնք հայտնի են «հանրահայտ փաստեր» ընդհանուր անվամբ:

Հարվարդի համալսարանում ընդունված բնորոշմամբ, «հանրահայտ փաստ» կամ ընդհանուր գիտելիք է այն տեղեկությունը, որը, որպես կանոն, հայտնի է կրթված ցանկացած անձի: Այդպիսին կարող են լինել հանրահայտ իրադարձությունները,

տարեթվերը, արտահայտությունները, երբեմն՝ նաև գաղափարները: Սակայն կոնկրետ անձի ստեղծագործական գործունեության արդյունք հանդիսացող փաստական տվյալները կամ գաղափարները չեն համարվում «հանրահայտ փաստ», հետևաբար, այս դեպքում հղումն աղբյուրին պարտադիր է: Մեկ այլ բնորոշմամբ, դա մի «տեղեկություն է, որին ենթադրաբար ծանոթ են կոնկրետ «համայնքի»՝ հաստատության, քաղաքի, վարչական շրջանի, պետության, ռասայի, էթնիկ խմբի, գիտաճյուղի, մասնագիտական ընկերակցության կամ այլ նմանատիպ շրջանակների ներկայացուցիչները»:

Գոյությունի ունի այդպիսի «հանրահայտ տեղեկությունների» երկու տեսակ՝ համընդհանուր և նեղ մասնագիտական: Համընդհանուր հանրահայտ են այն տեղեկությունները, որոնք ազատորեն շրջանառվում են հանրության մեջ, քաջածանոթ են հասարակության մեծ մասին, հասանելի են տեղեկագրքերում, հանրամատչելի հանրագիտարաններում, և, որպես կանոն, համարվում են անվիճելի իրողություններ: Այդպիսի հանրահայտ փաստեր են, օրինակ, ջրի մոլեկուլի կառուցվածքը՝ H2O, այն, որ «Սամվել» վեպի հեղինակը Ռաֆֆին է, որ ՀՀ Անկախության հռչակագիրն ընդունվել է 1990 թ. օգոստոսի 23-ին, իսկ Անկախության օրը նշվում է սեպտեմբերի 21-ին: Հանրահայտ տեղեկությունների այս տեսակին են պատկանում նաև ժողովրդական բանահյուսության նմուշները, հայտնի անձանց «թևավոր խոսքերը»:

Նեղ մասնագիտական շրջանակներում հանրահայտ փաստերն առանձնահատուկ են նրանով, որ դրանց քաջածանոթ են միայն մասնագիտական տվյալ խմբի անդամները: Օրինակ, այն, որ Արիստոտելը ժողովրդավարությունը չէր համարում կառավարման լավագույն ձև, որ Իրանն ու Վատիկանը կրոնապետություններ են, հանրահայտ փաստ է քաղաքագիտություն ուսումնասիրողների, բայց ոչ անպայման կենսաբանություն ուսումնասիրողների համար: Կամ էլ՝ եթե ջրի մոլեկուլի կառուցվածքը համընդհանուր հանրահայտ փաստ է, ապա ջրի հատկանիշների իմացությունը համընդհանուր է միայն նեղ մասնագիտական, օրինակ՝ քիմիայի ոլորտում:

Սակայն, ամեն դեպքում, պետք է հաշվի առնել, որ եթե քննարկումը չի սահմանափակվում միայն այդ հանրահայտ փաստերի արձանագրմամբ, այլ, օրինակ, ներառում է նաև կարծիքների, մոտեցումների, մասնագիտական գնահատականների ներկայացում, ապա վերջիններիս աղբյուրների հիշատակումը պարտադիր է:

Անշուշտ, գործնականում, հատկապես սկսնակ հետազոտողների համար երբեմն դժվար է լինում որոշել՝ տվյալը «հանրահա՞յտ փաստ» է, թե՞ ոչ: Այսպիսի դեպքերում նպատակահարմար է հղում անել որևէ աղբյուրի. եթե պարզվի, որ դա հանրահայտ փաստերի շարքից է, ձեր աշխատանքի գրախոսն ընդամենը կնշի, որ դրա համար որևէ աղբյուր հիշատակելու կարիք չկար: Սա, բնականաբար, ավելի լավ է, քան մեղադրվելը գրագողության մեջ: Այսպիսի իրավիճակներում գիտական ղեկավարի կամ դասախոսի օգնությանը դիմելը լավագույն տարբերակն է:

1.4. Աղբյուրների ճիշտ ընտրություն

Որակյալ հետազոտություն իրականացնելու համար աղբյուրների ընտրությունն ունի առանցքային նշանակություն: Այսօր համացանցային տիրույթի և հրատարակչական գործի զարգացումը մի կողմից հետազոտողին առաջարկում է թեմատիկ հրապարակումների առատություն, սակայն մյուս կողմից ի հայտ է գալիս այդ առատությունից պետքականը «ֆիլտրելու» խնդիր: Անշուշտ, կախված մասնագիտությունից, այդ «ֆիլտրը» կլինի տարբեր, և այդ հարցում դժվար է որևէ համընդհանուր չափորոշիչ առանձնացնել: Ավելին, այն հրապարակումը, որը մեկի համար (իր հետազոտական թեմայից ելնելով) կլինի անօգտակար «տեղեկատվական աղբ», մի ուրիշի համար կարող է լինել հակառակը՝ ուսումնասիրության հիմնական պաշար: Օրինակ՝ ներպետական քաղաքական մրցապայքարում կամ միջպետական հակամարտություններում կիրառվող քարոզչությունն ուսումնասիրողի համար խիստ արժեքավոր կլինեն մրցակցող/հակամարտող կողմերի այն հրապարակումները, որոնք մեկ այլ թեմա ուսումնասիրողի համար կորակվեն «քարոզչական աղբ»: Այս պայմաններում սկսնակ հետազոտողի համար օգտակար կլինի հետևել երեք խորհուրդների: Նախ, այս հարցերում առանցքային դերակատարում ունի գիտական ղեկավարը. նա պետք է, մի կողմից, ինքն առաջարկի նախնական, ուղղորդիչ հրապարակումներ, մյուս կողմից, օգնի ուսանողին՝ ընտրել և օգտագործել համապատասխան հրապարակումներ: Երկրորդ, բնականաբար, ուսանողն ինքը ևս պետք է փնտրի թեմատիկ հրապարակումներ: Իսկ հրապարակումների առատության մեջ ճիշտ ընտրություն կատարելու հարցում օգտակար կլինեն վերևում՝ աղբյուրների վստահելիության (հուսալիության) համար ուղղորդիչ ցուցանիշները: Երրորդ,

ժողովված նյութերի ընթերցման ժամանակ թեմատիկ հրապարակումներն իրենք ևս կհուշեն ուսանողին՝ ինչ գրականություն փնտրել: Օրինակ՝ որևէ հրապարակման մեջ ուսանողը կարող է հանդիպել մեկ այլ հրապարակման մասին հիշատակման, որն իրենից կներկայացնի խիստ արժեքավոր նյութ: Ընդհանուր առմամբ, կարելի է օգտվել աղբյուրների ընտրության հետևյալ ընդհանրական չափորոշիչներից.

- Թեմատիկ համապատասխանությունը–որքանո՞վ է տվյալ հրապարակումն արդիական և կիրառելի ընտրված թեմայի համար, որքանո՞վ է հեղինակի մոտեցումը հավասարակշռված և օբյեկտիվ, անկողմնակալ քննարկվող հարցերի նկատմամբ,
- Ժամանակային համապատասխանությունը–ե՞րբ է հրապարակվել տվյալ նյութը, դեռ կիրառելի՞ են դրանում արտացոլված գաղափարներն ու մոտեցումները, վերանայե՞լ է տվյալ հեղինակն իր մոտեցումները հետագայում՝ ավելի նոր հրապարակման մեջ (այս դեպքում անհրաժեշտ է կիրառել նոր հրապարակումը),
- Հրապարակման հանրահայտությունը–արդյո՞ք տվյալ աղբյուրը բավարար չափով հեղինակավոր է՝ այն հետազոտության մեջ ներառելու համար (հեղինակավոր հրատարակչություն, հետազոտական կենտրոն կամ գրախոսվող ամսագիր), արդյո՞ք այլ հեղինակներ անդրադարձել են տվյալ հրապարակմանը, որքանո՞վ է պետքական, օգտակար տվյալ հրապարակումն ընտրված հետազոտական թեմայի համար,
- Թեմատիկ ընդգրկունությունը–որքա՞ն համընդհանուր կամ ընդգրկուն են հրապարակման մեջ ներկայացված գաղափարներն ու մոտեցումները (հնարավոր է՝ ընտրված թեման ենթադրում է բավական նեղ ուղղվածության հրապարակումներ մասնավոր դեպքերի վերաբերյալ):

1.5. Աղբյուրների տիպաբանությունը

Աղբյուրները տիպաբանվում են տարբեր սկզբունքներով: Օրինակ, ըստ տեղեկության աղբյուրի բնույթի, դրանք լինում են՝

- առաջնային–երբ տեղեկությունն ստացվում է իրադարձություններում անմիջականորեն ներգրավված անձանցից (հարցազրույցներ, հասարակական կարծիքի ուսումնասիրություններ, նորմատիվ-իրավական ակտեր և այլն) կամ տեսությունը, սահմանումը, գաղափարն այն տեսքով, ձևով, ինչպես դրանց հեղինակն ինքն անձամբ՝ «առաջին ձեռքից» է ներկայացնում (բնօրինակը): Այս տեսակի աղբյուրները օգտագործվում են հետազոտության առանցքային դրույթների, մեջբերումների, փաստարկների ներկայացման ժամանակ:
- երկրորդային–երբ երևույթի, իրադարձության մասին տեղեկությունն ստացվում է «երկրորդ ձեռքից»՝ միջնորդավորված, այսինքն՝ բնօրինակի՝ այլ հեղինակների կողմից մեկնաբանությունների, վերլուծությունների տեսքով: Սրանք կարելի է կիրառել ավելի պակաս նշանակալի փաստական տվյալների, օրինակների համար:

Ըստ տեղեկության աղբյուրի տեսակի, տարբերում են տպագիր, տեսա- և ձայնային, էլեկտրոնային/թվային աղբյուրները, նկարները և ֆոտոպատկերները: Ըստ տեղեկության աղբյուրի տիպի, տարբերում են հետևյալ աղբյուրները.

- Գիրք, գրքույկ և հոդվածների ժողովածու,
- Ամսագիր (ամսագրային հոդված),
- Թերթ (թերթային հոդված),
- Անհատական/մասնավոր հաղորդակցություն (հարցազրույց, նամակ),
- Իրավական ակտ (օրենք, որոշում, պայմանագիր),
- Վիճակագրություն,
- Չհրատարակված նյութ (թեզիս, ձեռագիր, հոդված),
- Ռադիո- և հեռուստահեռարձակումներ և այլն:

1.6. Հղումներ կատարելու ձևերը

Ոչ միայն ողջ աշխարհում, այլև ոչ մի երկրում չկա հղումների միասնական (պարտադիր) ոճ: Որպես կանոն, գիտական ընկերությունները, բուհերը, հրատարակչությունները, ամսագրերն իրենք են որոշում իրենց համար նախընտրելի ոճը: Ուստի քիչ չեն դեպքերը, երբ միևնույն բուհի տարբեր մասնագիտական ստորաբաժանումներում (ֆակուլտետ, բաժին) կիրառվում են հղումների տարբեր ոճեր: Հղումների տարբեր ոճերի կարելի է հանդիպել նաև միևնույն մասնագիտությանը վերաբերող տարբեր հրապարակումներում, այդ թվում՝ տարբեր երկրներում հրատարակված: Ընդհանուր առմամբ, ակադեմիական միջավայրում կիրառվում են հղումների 10-ից ավելի ձևեր (ՀՀ-ում լայն տարածում ունեցող և ավանդական համարվող «խորհրդային» ձևը դրանցից մեկն է), որոնք դասակարգվում են 3 հիմնական ոճային խմբերի մեջ՝ ներտեքստային, շարունակվող համարակալմամբ և կրկնվող համարակալմամբ:

Ստորև կներկայացնենք այս երեք հիմնական ոճային խմբերն իրենց առանձնահատկություններով, համեմատական առավելություններով ու թերություններով:

1.7.Հղումների հիմնական ոճերը

Ներտեքստային ոճ: Բուն տեքստի մեջ տրվում են հեղինակի կամ կազմակերպության անունը՝ ուղղակիորեն տեքստում կամ փակագծերի մեջ, հրատարակման տարեթիվը և օգտագործված հատվածի էջը:

Օգտագործված աղբյուրներն այբբենական կարգով ներկայացվում են հետազոտության տեքստի (հոդվածի, աշխատանքի գլխի կամ ենթագլխի) վերջում:

Այս ոճի առավելություններից են՝ շատ հարմար է տպագիր և առնվազն մեկ հեղինակ ունեցող հրապարակումների դեպքում, մասնավոր քննարկման ժամանակագրական զարգացումը հետևելու համար, հեշտ է վարժվելն ու օգտագործելը, տարածված է ու ճանաչելի, չկա հղման համար հայացքը բուն տեքստից կտրելու և տողատակը կամ աշխատանքի վերջում տրված աղբյուրների ցանկը նայելու կարիք: Թերություններից են՝ անհարմար է անհեղինակ կամ հրատարակման տարեթիվ չունեցող, համացանցային հրապարակումներին, հեռուստա- և ռադիոհաղորդումներին, տեսա- և ձայնային նյութերին, երկրորդային աղբյուրներին հղում անելու համար:

Շարունակական համարակալում: Սա ՀՀ-ում առավել տարածված հղման ոճն է: Այս դեպքում բուն տեքստում կիրառվում է վերտողային համարակալում, որը կապակցված է տողատակային կամ տեքստի վերջում տրվող աղբյուրագիտական գրառման հետ: Ըստ որում, համարակալումն իրականացվում է շարունակականության սկզբունքով, երբ ողջ տեքստում հղումների համարակալումը շարունակվում է (1 , 2 , 3 , 4 …), այլ ոչ թե ամեն էջում սկսում նորից:

Օգտագործված աղբյուրների ցուցակը տրվում է հետազոտության տեքստի (հոդվածի, աշխատանքի գլխի կամ ենթագլխի) վերջում:

Այս ոճի առավելություններից են՝ ավանդութային է, հատկապես՝ տողատակային տարատեսակը, հարմար է բոլոր բնույթի, տեսակի, տիպի աղբյուրներին հղում կատարելու համար: Թերություններից են՝ տեխնիկապես մի փոքր խրթին է, որը, սակայն, կարելի է մեղմել MS Word խմբագրիչի համապատասխան ներդրված կարգավորման (References, Ссылки) միջոցով, ընթերցողն ստիպված է անընդհատ հայացքը կտրել տեքստից՝ հղման աղբյուրը տողատակում կամ աշխատանքի վերջում նայելու համար:

Կրկնվող համարակալում: Այս ոճի դեպքում տեքստում կիրառվում է փակագծերի մեջ առնված կամ վերտողային կրկնվող համարակալում, որը կապակցված է աշխատանքի (հոդվածի, գրքի գլխի կամ ենթագլխի) վերջում տրված աղբյուրների ցուցակի հետ: Այս ոճի առանձնահատկությունն այն է, որ միևնույն աղբյուրին հղման համարը կրկնվում է: Այսինքն, եթե ինչ-որ մի աղբյուրի հղման համարը [18]-ն է, ապա ողջ տեքստում այդ աղբյուրին հղում կատարելիս կկիրառվի նույն համարը: Ավելին, աղբյուրների ցուցակը կազմվում է ոչ թե այբբենական կարգով, այլ աշխատանքում աղբյուրներին հղման հաջորդականությամբ: Այս ոճի առավելություններից են՝ միևնույն աղբյուրին հղման համար օգտագործվում է միայն մեկ թիվ, և կարիք չկա օգտագործելու հապավումներ կամ բառակապակցություններ, ինչպիսիք են «նույն տեղում», «նշված աշխատությունը», որոնք կիրառվում են շարունակական համարակալման դեպքում, նույն աղբյուրի տարբեր էջերին հղում կատարելու համար պահանջվում է ընդամենը փակագծերում տրված հղման համարի կողքին գրել էջը: Թերություններից է այն, որ աղբյուրին ծանոթանալու համար ընթերցողը ստիպված է հայացքը կտրել տեքստից և նայել աշխատանքի վերջում տրված ցուցակը:

ԳԼՈՒԽ 2. Օգտագործված աղբյուրների մատենագիտական տվյալների ներկայացումը

Աղբյուրների մատենագիտական տվյալները թերի կամ ոչ ճշգրիտ ներկայացնելը կարող է համարվել տեխնիկական թերություն, իսկ եթե այնքան թերի է, որ գործնականում անհնար է կամ խիստ դժվար է աղբյուրը գտնելը, ապա դա կարող է անգամ համարվել գրագողություն: Սա նշանակում է, որ աղբյուրների մատենագիտական տվյալների ճշգրիտ ներկայացումը ևս ունի առանցքային նշանակություն հետազոտական աշխատանքների համար: Այս առումով, հարկ է հաշվի առնել երկու հանգամանք.

1. Հղումների բոլոր ոճերի դեպքում պահանջվում են աղբյուրների գրեթե միևնույն տվյալները,

2. Հղումների ոճային յուրաքանչյուր տարատեսակի դեպքում մատենագիտական այդ տվյալները նշվում են տարբեր հերթականությամբ: Ստորև տրված են որոշ օրինակներ.

Գիրք, գրքույկ

1. Հեղինակի ազգանունը, անունը (երբեմն՝ միայն առաջին տառը)
2. Աշխատության վերնագիրը
3. Հրատարակչությունը
4. Հրատարակման վայրը
5. Հրատարակման տարեթիվը

Օրինակ՝ Արշավիր Թորոսյան «Հայաստանի դեղաբույսերը», Հայաստան հրատարակչություն, Երևան 1983

Հոդված ժողովածուից

1. Հեղինակի ազգանունը, անվան առաջին տառը
2. Հոդվածի (գլխի, ենթագլխի) վերնագիրը
3. Ժողովածուի վերնագիրը
4. Հրատարակչությունը
5. Հրատարակման վայրը
6. Հրատարակման տարեթիվը
7. Օգտագործված հատվածի էջը

Օրինակ՝ Ա. Ավդալյան, բանաստեղծական ժողովածու Նավասարդ, «Սովետական գրող», Երևն, 1980, 52 էջ:

Հոդված ամսագրից

1. Հեղինակի ազգանունը, անվան առաջին տառը
2. Հոդվածի վերնագիրը
3. Ամսագրի հերթ. համարը
4. Հրատարակման տարեթիվը
5. Օգտագործված հատվածի էջը

Օրինակ՝ Kozulin, A., "Literature as a psychological tool", Educational Psychologist, vol. 28, no. 3, 1993, pp. 253-265.

Տեսաֆիլմ

1. Վերնագիրը, սերիալի դեպքում՝ սկզբում սերիան
2. Ձևաչափը
3. Ձայնագրման ստուդիան
4. Ձայնագրման վայրը
5. Ձայնագրման տարեթիվը

Օրինակ՝ My Brilliant Career, 1979, motion picture, New South Wales Film Corporation, distributed by Australian Video, Australia.

Հասանելի է https://www.youtube.com/watch?v=pNfTK39k55U

Առցանց տարբերակի դեպքում

The Overlander, Overlander.tv: Aboriginal tent embassy, Canberra, 2007, online video, մատչելի է 31 July 2007, Հասանելի է 11.11.18 https://www.youtube.com/watch?v=pNfTK39k55U

Համացանցային հրապարակումներ

Համացանցային աղբյուրներին հղում կատարելու կարգը նույն է, ինչ դրանց տեքստային տպագիր տարբերակներին հղում կատարելու դեպքում: Սակայն այս դեպքում անհրաժեշտ է աղբյուրի մատենագիտական տվյալների մեջ ներառել նաև աղբյուրի էլեկտրոնային ամբողջական հասցեն և դրան մուտք գործելու ժամանակը: Էլեկտրոնային շատ երկար հասցեները կարելի է «կոտրել»՝ մյուս մասը շարունակելով հաջորդ տողում:

Օրինակ՝ Վիկտոր Համբարձումյան, *«Հայկական սովետական հանրագիտարան»*, ՀՍՀ գլխավոր խմբագրություն, Երևան, Հայ սովետական հանրագիտարան հրատարակչություն, 1975.
https://hy.wikisource.org/wiki/%D4%BB%D5%B6%D5%A4%D5%A5%D6%84%D5%BD:%D5%80%D5%A1%D5%B5%D5%AF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%8D%D5%B8%D5%BE%D5%A5%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%80%D5%A1%D5%B6%D6%80%D5%A1%D5%A3%D5%AB%D5%BF%D5%A1%D6%80%D5%A1%D5%B6_(Soviet_Armenian_Encyclopedia)_1.djvu

2.1.Օգտագործված աղբյուրների ցանկ և գրականության ցանկ

Հայաստանյան իրականության մեջ օգտագործված աղբյուրների և գրականության ցանկերը հաճախ են շփոթում: Սրանց տարբերությունը նրանում է, որ առաջինում նշվում են միայն հետազոտության մեջ ուղղակիորեն օգտագործված/հղում արված աղբյուրները, իսկ երկրորդի դեպքում՝ և՛ ուղղակիորեն օգտագործված, և՛ այն աղբյուրները (անպայման առանձնացված՝ հատուկ վերնագրով), որոնք ուղղակիորեն չեն հիշատակվել հետազոտության մեջ, բայց ազդել են դրա հեղինակի հայացքների ձևավորման վրա:

Ինչպես հղումների դեպքում աղբյուրների մատենագիտական տվյալները ներկայացնելիս, այնպես էլ օգտագործված աղբյուրների և գրականության ցանկերը կազմելիս առաջնորդվում են տարբեր սկզբունքներով: Հաճախ հղումների կոնկրետ ոճի դեպքում կիրառվում է այդ ցանկերի կառուցման այս կամ այն սկզբունքը:

Ընդհանուր առմամբ, աղբյուրների ցանկերի կառուցման համար կիրառում են հետևյալ սկզբունքները.

1. Սկզբում տրվում են առաջնային, ապա՝ երկրորդային աղբյուրները:

2. Հղումների որոշ ոճերի դեպքում կիրառվում են աղբյուրների դասակարգման լեզվական առաջնայնության և այբբենական կարգեր. աղբյուրների ցանկի ամեն բաժնի ներսում այբբենական կարգով դասակարգվում են սկզբում՝ հայերեն, ապա՝ օտարալեզու աղբյուրները:

3. Աղբյուրները ներկայացվում են տիպաբանորեն՝ սկզբնաղբյուրներ (սրանք ևս պետք է առանձնացնել ըստ տեսակների՝ նորմատիվ-իրավական ակտեր, հարցումներ և

այլն), տպագիր և էլեկտրոնային գրքեր (ներառյալ՝ մենագրությունները, գրքույկները, ժողովածուները), տպագիր և էլեկտրոնային ամսագրային հոդվածներ, տպագիր և էլեկտրոնային տեքստային դասախոսություններ, չհրատարակված նյութեր, զեկույցներ, ատենախոսություններ, տպագիր և էլեկտրոնային մամուլի հրապարակումներ, տեսա- և ձայնագրություններ, հեռուստա- և ռադիոհաղորդումներ և այլն:

Եզրակացություն

Ուսումնասիրելով վերը թվարկված կետերն ու դրույթները, կարելի է եզրակացնել, որ արդի ժամանակաշրջանում հետազոտական աշխատանք կատարելիս անհրաժեշտ է հղումներ կատարելը, ինչպես նաև հղումներում առկա գրականության ցանկի, աղբյուրների ճիշտ ընտրությունը, մատենագիտական տվյալների ներկայացումը մատնանշելը, քանի որ նոր մեթոդները, ժամանակակից տեխնոլոգիաները պահանջում են արդի մոտեցումներ յուրաքանչյուր հարցում:

Հղումների ճիշտ ներկայացումը նպաստում են նյութի արագ որոնմանը, դրա ճիշտ կիրառմանը: Ուստի անհրաժեշտ է հետազոտական աշխատանքը կատարել գիտության առաջընթացին համահունչ՝ կիրառելով նորօրյա մեթոդներ և արդի տեխնոլոգիական միջոցներ:

Օգտագործված գրականության ցանկ

Ա. Մենագրություններ, ուսումնասիրություններ

1. C. Neville, The complete guide to referencing and avoiding plagiarism, 2nd խմբ., New York: Open University Press, 2010.
2. The Harvard College Writing Program, “The Exception: Common Knowledge,” 2014.
3. The University of Western Australia, “Harvard citation style,” UWA Information Services, 2014.
4. Microsoft Office, «Автоматическое форматирование списков литературы с помощью стилей APA, MLA, Chicago,» Microsoft Office,

Բ. Էլեկտրոնային աղբյուրներ

5. http://publishing.ysu.am/files/Gitahetazotakan_ashkhatanq_katarelu_skzbunqner.pdf
6. https://www.slideshare.net/nareksgalstyan/ss-33992678
7. https://hy.wikipedia.org/wiki/%D5%80%D5%B2%D5%B8%D6%82%D5%B4%D5%B6%D5%A5%D6%80
8. http://eua.am/wp-content/uploads/2018/10/karg.pdf